ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/20 «21» 01 2026 թ.

«ԱՐՄԵԴ» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐ ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

ՀՐԱՎԵՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել **էլեկտրոնային առողջապահության համակարգի ծառայություններ:**

Առաջարկվում է Ձեզ մատուցել վերոնշյալը:

Գնումները ֆինանսավորվելու է ՀՀ ՆԳՆ բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ **«Արմեդ» էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր ՓԲԸ-ն** ունի.

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը
2. մասնագիտական փորձառություն
3. տեխնիկական միջոցներ
4. ֆինանսական միջոցներ
5. աշխատանքային ռեսուրսներ
6. Համակարգի տեխնիկական կառավարում և բարելավում սերվերային, ցանցային և տեխնիկական ենթակառուցվածքի պահպանում և շահագործում, դրանց կազմի և կառուցվածքի բարելավման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում, պահպանում և վերազինում:

7. Բաժանորդների և օգտագործողների սպասարկում մշտապես գործող սպասարկման կենտրոն միջոցով Ծրագրակազմ սպասարկում համակարգի ծրագրային ապահովման անխափան շահագործում, ծրագրային գործիքակազմի շարունակական բարելավում, ծրագրային թարմացումների ձեռքբերում ծրագրային ապահովումների մատակարար հանդիսացող ընկերություններից:

Ձեզ է ուղարկվում **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2026/Ս-12** ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը:

Համաձայնության դեպքում անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը, ինչպես նաև ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություններ պարունակող կայքէջի հղումը:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ